ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2019թ. թիվ 615-Ա

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ» ՓԲԸ-Ի
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «իզ» կետի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի տնօրենի 2019թ. հոկտեմբերի 22-ի թիվ 22 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2015թ. հոկտեմբերի 12-ի «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 311-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 24
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հոկտեմբերի 24-ի
թիվ 615-Ա որոշման

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ» ՓԲԸ-Ի
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/հ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Գինը /ՀՀ դրամ/
1	Թարմ սառեցված պլազմա (1 փաթեթ)	12000
2	Էրիթրոցիտար զանգված (1 փաթեթ)	12000
3	Էրիթրոցիտար զանգվածի կրկնակի լվացում	3000
4	Արյան ABO և ռեզուս պատկանելության որոշում հասարակ եղանակով	2000
5	Արյան ABO համակարգի որոշում խաչաձև եղանակով (ներառյալ հակածին A_1)	2000
6	ABO-ի իմուն հակամարմինների որոշում	1000
7	Աուտոիմուն սառը հակամարմինների տիտրի որոշում	2000
8	Հիվանդի և մեկ արյան բաղադրամասի համատեղելիության որոշում	2000
9	ՄԻԱՎ 1+2 հակածին – հակամարմնի որոշում արյան մեջ (ԻՖԱ եղանակով)	3500
10	HB_S Ag որոշում արյան մեջ (ԻՖԱ եղանակով)	3000
11	HBcor – գումարային հակամարմինների որոշում արյան մեջ	3000
12	HCV հակամարմինների որոշում արյան մեջ (ԻՖԱ եղանակով)	3000
13	Սիֆիլիս (TPHA)	2000
14	Բրուցելյոզ	2000
15	Հեպատիտ B, հեպատիտ C, ՄԻԱՎ-ի հետազոտություն (արագացված տեստ)	2000

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

10/24/2019

X

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ